

# ԳԼՈՒԽ տասնվեցերորդ – «ՀԱՄԵՐԳ»

[ԳԼՈՒԽ տասնհինգերորդ](#)



Քաղաքով մեկ տարածվեց ակասավոր ճանապարհորդ Անգետիկի և հիվանդանոց ընկած նրա ընկերների համբավը: Ճնճողուկիկն ու Թմբլիկը, առանց դադար առնելու, տնից տուն էին վազում և այդ նորությունը պատմում ընկերուհիներին: Այդ ընկերուհիներն իրենց հերթին պատմում էին ուրիշ ընկերուհիների, այդ ուրիշներն էլ երրորդներին և, շուտով, քաղաքի ողջ բնակչությունը, ասես հրամանով, շարժվեց դեպի հիվանդանոց: Աչոնիկներից ամեն մեկն ուզում էր որևէ բանով օգնած լինել տուժած մանչուկներին: Իրենց հետ նրանք տանում էին ամեն ինչ: Ոմանք համեղ կարկանդակներ, մյուսները՝ մուրաբաներ, երրորդները քաղցր պաստեղ կամ կոմպոտ:

Կես ժամ անց աչոնիկները լցվեցին հիվանդանոցի ողջ փողոցը: Այդքանին, իհարկե, չէին կարող ներս թողնել հիվանդանոց: Մեղրածաղիկը դուրս եկավ արտասանողուղք և ասաց, որ հիվանդները ոչ մի բանի կարիք չունեն, դրա համար էլ բուլորը պետք է ցրվեն տները և չաղմկեն այստեղ, լուսամուտների տակ: Բայց աչոնիկները չէին ուզում ցրվել, ինչ-որ հրաշքով նրանց հայտնի էր դարձել, որ Անգետիկ անունով ամենագլխավոր մանչուկը հիվանդանոցից դուրս է գալիս իր ընկերների Ներկամուլիկի և Տավղիկի հետ միասին:

Մեղրածաղիկը ստիպված եղավ նորից հայտարարելու, որ Անգետիկը դուրս չի գա, մինչև բուլորը չցրվեն: Բայց աչոնիկները, փոխանակ տները ցրվելու, գնացին իրենց ընկերուհիների մոտ, որոնք ապրում էին հիվանդանոցային փողոցում: Երբ Անգետիկը, Ներկամուլիկն ու Տավղիկը Ձյունիկի և Կապտաչիկի ուղեկցությամբ փողոց դուրս եկան, տեսան, որ բուլոր լուսամուտներից դուրս են նայում տասը-տասը աչոնիկ: Անգետիկի ինքնասիրությունը շատ շոյվեց այդ ուշադրությունից: Նրա ականջին էին հասնում այսպիսի ձայներ:

- Ասացե՛ք, մի ասացե՛ք, սրանցից ո՞րն է հռչակավոր Անգետիկը:
- Անգետիկը, այ այն մեկն է, դեղին տաբատովը:
- Ախ մեծականջը: Ոչ մի դեպքում չէի ասի, թե դա է Անգետիկը: Սա բավական հիմարավունն տեսք ունի:
- Չէ՛, հենց դա է որ կա: Տեսքը, ճիշտ է, հիմարավունն է, բայց աչքերը շա՛տ խելոք են:

Փողոցի անկյունի տան երկրորդ հարկից մի աչունիկ, տեսնելով Անգոտիկին, սկսեց ձեռքերը թափահարել և բարակ, ծղրտան ձայնով ճչալ.

– Անգետի՛կ, Անգետի՛կ, ուռա՛:

Եւ աներկյունը կախվեց լուսամուտից այնպես, որ վերջը քիչ մնաց դուրս ընկներ: Լավ է, որ մյուս աչունիկները կարողացան բռնել նրա ոտքերից ու ներս քաշել:

– Թյո՛ւ, ինչ ամոթ է: Այդ Անգետիկն ով գիտի ոնց կերևակայի իրեն,  
– ասաց խիստ բարաւիկ դեմքով ու սուր կզակով մի աչունիկ:

– Դուք իրավացի եք, Ճիծեռնակիկ, – պատասխանեց նրան մի ուրիշ աչունիկ, վեր ցցված վերին շրթունքով, որի տակից փայլում էին ճերմակ ատամները: – Մանչուկներին չպիտի ցույց տալ, թե նայում ես իրենց: Երբ նրանք համոզվում են, որ իրենց չարությունները ոչ ոք չի նկատում, հենց իրենք են դադարում չարություն անել:

– Այ, ես էլ հենց այդ եմ ասում, Փիսունիկ, – վրա բերեց Ճիծեռնակիկը: Մանչուկներին հարկավոր է արհամարհել: Երբ նրանք տեսնեն, որ իրենց արհամարհում են սիրտ չեն անի վիրավորել մեզ:

Ճիծեռնակիկն ու Փիսունիկը փսփսացին, փսփսացին, դժժացին, դժդժացին, մինչև որ բուրրի ականջները լցրին, թե հարկավոր է եկած մանչուկներին արհամարհանքով վերաբերել: Բուրր աչունիկները իրար մեջ պայմանավորվեցին չնկատելու տալ մանչուկներին, իսկ եթե փողոցում հանդիպեն նրանց, ապա հեռվից նկատելուն պես ետ դառնան կամ անցնեն մյուս կողմը:

Բայց այդ պայմանից բան դուրս չեկավ: Ինչ-որ հրաշքով բուրրին հայտնի դարձավ, որ Ներկամուլիկը նկարիչ է, իսկ Տավդիկը՝ սքանչելի երաժիշտ, որ նվագում է ֆլեյտայի վրա: Բուրրն իհարկե, ուզում էին շուտով լսել նրա նվագը, քանի որ Կանաչ քաղաքում գիտեին նվագել միայն տավդի վրա, իսկ ֆլեյտա ոչ ոք չէր լսել: Շատերը նույնիսկ չգիտեին, որ այդպիսի գործիք կա:

Շուտով աչունիկներն իմացան, որ Ներկամուլիկն ու Տավդիկը տեղավորվել են Խնձորի հրապարակի վրա գտնվող այն տանը, ուր ապրում էր

Քորոցիկն իր ընկերուհիների հետ: Այդ տան երկրորդ հարկում, հենց կտուրի տակ, կար մի լայնարձակ սենյակ` ամբողջ պատը բռնող մեծ, լուսավոր պատուհանով: Այդ սենյակը Ներկամուլիկին դուր էր եկել, որովհետև շատ լուսավոր էր, և նա ու Տավղիկը վճռել էին այնտեղ բնակություն հաստատել: Վերևի սենյակի լուսամուտը ուղիղ Խնձորի հրապարակին էր նայում: Եվ ահա, երեկոյան, Խնձորի հրապարակը, ուր առաջ մեծ անցուղարձ չէր լինում, անմիջապես լցվեց զբոսնող աչունիկներով: Ձեռք-ձեռքի տված` սրանք գուլյգ-գուլյգ անցուղարձ էին անում հրապարակում և աչքի պոչով նայում երկրորդ հարկի լուսավոր պատուհանին: Նրանք այդ անում էին, իհարկե, ոչ այն բանի համար, որ տեսնեն Ներկամուլիկին ու Տավղիկին, այլ ուղղակի անհամբերությունից, բոլորն ուզում էին շուտով երաժշտություն լսել:

Ժամանակ առ ժամանակ նրանք նկատում էին բաց լուսամուտում վայրկենաբար երևացող Տավղիկի կանոնավոր սանրվածքով գլուխը, մերթ էլ Ներկամուլիկի խճված մազախուրձը: Ապա դադարեց դա, և աչունիկները տեսան Ներկամուլիկին, որ լուսամուտի գոգին հենված, երազուն հայացքով հեռուն էր նայում: Ներկամուլիկից հետո լուսամուտի մոտ հայտնվեց Տավղիկը: Նրանք ձեռքերը թափահարելով և շուրջները նայելով ինչ-որ դատողություններ էին անում: Հետո դուրս կախվեցին լուսամուտից և, կռակալով, սկսեցին ներքև նայել: Ապա երկուսն էլ մի-մի անգամ թքեցին երկրորդ հարկից և նորից ծածկվեցին լուսամուտի հետևում:

Թվում էր, թե այլևս հետաքրքիր ոչինչ չի կատարվի, բայց աչունիկները ցրվելու միտք չունեին: Եվ հենց այդ ժամանակ լուսամուտից հորդեցին առվակի քչքչոցի նման քնքուշ հնչյունները: Նրանք մերթ ալիքների նման համաչափ ծփում էին մեկը մյուսի հետևից, մերթ էլ թռչկոտում ու թավալվում օդում, վազելով իրար հետևից և իրար բախվելով: Դա բոլորի սիրտը լցնում էր հրճվանքով: Ֆլեյտայի հնչյուններն ասես քաշում էին աչունիկների ձեռքերից ու ոտքերից, բոլորն ակամա ուզում էին պարել:

Անադմուկ բացվեցին տների լուսամուտները: Շարժումը հրապարակում դադարեց: Բոլորը քարացան` ջանալով բաց չթողնել և ոչ մի հնչյուն:

Վերջապես ֆլեյտան լռեց, բայց և իսկույն դիմացի տան լուսամուտից

լսվեց տավղի ծայրը: Տավիղն աշխատում էր կրկնել նոր, մինչև այժմ անծանոթ այդ մեղեդին: Ինչ-որ մեկի մատները անվստահ սահում էին լարերի վրայով: Բավական աշխույժ տեմպով սկսված մեղեդին կամաց-կամաց թուլացավ, վերջապես բոլորովին մարեց, բայց ֆլեյտան իսկույն օգնութայան հասավ, վրա բերեց շարունակությունը: Տավիղն աշխուժացավ, ավելի հաստատ հնչեց: Հարևան տնից նրան միացավ մեկ ուրիշը, ապա՝ երրորդը: Ավելի բարձր և ուրախ հնչեց երաժշտությունը:

Անգետիկը, որ ներկերն ու վրձինը վազել բերել էր ներկամուկիկին տալու, հրապարակում, տան առաջ, մի արտակարգ տեսարանի հանդիպեց: Ողջ հրապարակը լիքն էր աչոնիկներով, որոնք լսում էին այդ սքանչելի համերգը: Անգետիկը ևս ականջ դրեց և նույնիսկ թռչկոտեց մի ոտքի վրա, բայց տեսնելով, որ իր պարը ոչ ոք բանի տեղ չի դնում, ձեռքը թափ տվեց ու անհետացավ տան դռների հետևում:

[Գլուխ տասնյոթերորդ](#)